C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ №28

25.07.2025



Ֆրանսիական հրուշակագործության բարձր արվեստը՝ նոր լաբորատորիայում



Օվերն-Ռոն-Ալպ տարածաշրջանի և Լիոնի ՍԵՊՌ կամպուսի ֆինանսական աջակցությամբ ՍԵՊՖԱ-ում հիմնադրված հրուշակագործության լաբորատորիայի բացման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ Օվերն-Ռոն-Ալպ տարածաշրջանի փոխնախագահ Կատրին Ստարոնի գլխավորությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ Հիմնադրամի տնօրեն Գոհար Գրիգորյանը:

Արարողությանը ներկա ՀՀ ԿԳՄՍ նախարար տիկին Ժաննա Անդրեասյանը իր խոսքում ընդգծեց հայ-ֆրանսիական համագործակցության կարևոր



դերը Հայաստանում մասնագիտական կրթության զարգացման գործում՝ նշելով, որ ՍԵՊՖԱ-ի կրթական մոդելը համակարգային է և կարող է կիրառվել նաև մյուս հաստատություններում: Ռոնի մասնագիտական կրթության ընկերության նախագահ Քրիստիան Դրոզն իր խոսքում նշեց, որ լաբորատորիայի բացմամբ տասնյակ երիտասարդների հնարավորություն է տրվում սովորելու հրուշակագործության բարձր արվեստը, ստեղծագործելու և զարգանալու սեփական հայրենիքում:



Հրուշակագործության լաբորատորիայի բացման արարողությանը ներկա էին նաև փոխնախարար Արաքսիա Սվաջյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի և Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ, Հիմնադրամի հիմնադիր ՍԵՊՌ կամպուսի ներկայացուցիչներ, այլ գործընկերներ:

Նշենք, որ լաբորատորիայի ողջ ուսումնական գույքն ու սարքավորումները ներկրվել են Ֆրանսիայից :

Ֆրանս-հայկական ապակենտրոնացված համագործակցության համաժողով Գորիսում

Գորիս քաղաքում կայացած Հայաստան - Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովի շրջանակներում տեղի ունեցած չորս թեմատիկ քննարկումներին մասնակեցին նաև ՍԵՊՖԱ-ի և ՍԵՊՌ-ի ներկայացուցիչները: «Ինչպես ապակենտրոնացված համագործակցությունը կարող է հասցեագրել Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանվածների կարիքները»,

«Տարածքների տնտեսական զարգացում», «Երիտասարդություն (կրթություն, մշակույթ, ֆրանկոֆոնիա, մասնագիտա-





կան կրթություն, կամավորություն)»:

«Տեղական կառավարում, կանանց դերը կառավարման համակարգում, ֆեմինիստական դիվանագիտություն և քաղաքացիական մասնակցություն» թեմատիկ քննարկումներին ելույթով հանդես եկան ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը, ՀԽ նախագահ Քրիստիան Դրոզը, ՍԵՊՌ կամպուսի գլխավոր տնօրեն Օրիան Ռենոն, միջազգային բաժնի տնօրեն Կլեր Շալլանդ Օսունան, ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչ Նազելի Մաշուրյանը:

Էրազմուսյան հանդիպումներ Իտալիայում

Մարտի 31-ից ապրիլի 4-ը Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի տնօրեն Գոհար Գրիգորյանը, Գյումրու պետական



բժշկական քոլեջի տնօրեն Մարինա Մարտիրոսյանը, ՀՀ ԿԳՄՍՆ նախնական արհեստագործական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության բաժնի պետ Ռուզաննա Պեպանյանն այցելեցին Իտալիայի Ալբա քաղաքում գտնվող ծրագրի գործընկեր ԱՊՐՈ Ֆորմացիոնե ուսումնական կենտրոն: Այցի ընթացքում իրականացվեց փորձի փոխանակում՝ միտված մասնագիտական կողմնորոշման, կրթության թվայնացման, նորարարական մեթոդաբանությունների և կայուն զարգացման ոլորտում ղեկավար կազմի կարողությունների հզորացմանը:



Այց կատարվեց նաև LiveTech ընկերություն՝ ծանոթանալու աշխատաշուկայի կարիքներին համապատասխան կրթական ծրագրերին:

Պատվիրակության անդամները հանդիպեցին ԱՊՐՈ Ֆորմացիոնեի տնօրեն պարոն Անտոնիո Բոսիոյի հետ, այցելեցին Պիեմոնտի մարզպետարան, որտեղ ակտիվ քննարկումներ տեղի ունեցան երկու երկրների քաղաքականություն մշակողների միջև Նրանք եղան նաև Կունեոում տեղակայված Տաղանդների քաղաք մասնագիտական կողմնորոշում իրականացնող հաստատությունում, ինչպես նաև Թուրին քաղաքում գտնվող Piazza dei Mestieri ուսումնական կենտրոնում, որտեղ ուսումնասիրեցին կրթության կազմակերպման և մասնագիտական կողմնորոշման նորարարական մոտեցումները:

Էրազմուսյան հանդիպումներ Լիոնում

Ապրիլի 7-9-ը Ֆրանսիայի Լիոն քաղաքում կայացան կարևոր հանդիպումներ Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում՝ ուղղված Հայաստանում մասնագիտական կողմնորոշման զարգացմանը:

Հայկական պատվիրակության կազմում էին ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը, Գյումրու պետական բժշկական քոլեջի տնօրեն Մարինա Մարտիրոսյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը և ԿԳՄՍՆ մասնագիտական կրթության բաժնի պետ Կարեն Մանուկյանը:

Հանդիպումների ընթացքում մասնակիցներին ողջունեցին ՍԵՊՌ ուսումնական կենտրոնի



նախագահ Քրիստիան Դրոզը, Լիոնում ՀՀ գլխավոր հյուպատոս Նարինե Նիկոլյանը, ինչպես նաև՝ Լիոնի Մետրոպոլի միջազգային կապերի տնօրեն Քրիստոֆ Մոնիեն, Լիոնի քաղաքապետարանի միջազգային կապերի գծով տնօրեն Էմիլի Միրջանյանը և Օվերն-Ռոն-Ալպ տարածաշրջանի՝ Հայաստանի հետ կապերի համակարգող Անյես Էրնյուն:

Պատվիրակությունն այցելեց Caravane des Metiers (Արհեստների քարավան) մասնագիտությունների տոնավաճառ, ծանոթացավ ժամանակակից շուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններին:

Հայկական պատվիրակությունը հնարավորություն ունեցավ հանդիպելու Օվերն - Ռոն - Ալպ տարածաշրջանի մի շարք ղեկավարների՝ այդ թվում ՄԿՈՒ գծով փոխնախագահ Ժակ Բլանշեի, մասնագիտական կողմնորոշման գծով տնօրենի տեղակալ Ալեքսանդրա Շամբազի և միջազգային կապերի տնօրինության ֆրանկոֆոնիայի և զարգացման գծով տնօրեն Ֆրանսիս Բուլամոյի հետ և քննարկելու մասնագիտական կողմնորոշման ռազմավարությունները, ռեգիոնալ կառույցների կառուցվածքը և ոչ ֆորմալ կրթության ճանաչման քաղաքականությունները:



ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչը՝ EfVET TTT Tourism Thematic Team 2025 տարեկան միջոցառմանը

Ֆրանսիայի ՍԵՊՈ Աննոնե կամպուսում անցկացված EfVET TTT Tourism Thematic Team 2025 տարեկան միջոցառմանը մասնակցել է ՍԵՊՖԱ-ի որակի ապահովման պատասխանատու Աիդա Դաբաղյանը: ՄԿՈՒ գերազանցության ոլորտում գբոսաշրջությանն ու հյուրընկալությանը, ֆինանսավորմանն ու կրթական ծրագրերի մշակմանն առնչվող մի շարք հարցերի քննարկմանը մասնակցում էին 14 երկրների ավելի քան 50 ներկայացուցիչներ:



Միջոցառման ընթացքում հյուրերը պատիվ ունեցան այցելելու միշլենյան 3 աստղ ունեցող Les Maisons Marcon ռեստորան, Valrhona շոկոլադի թանգարան, Chapoutier գինու գործարան, կատարելու գինու համտես Maison Marcon գինու մառանում, մասնակցելու կրուասանի պատրաստման վարպետաց դասին, ինչպես նաև վայելելու ՍԵՊՈ Աննոնե կամպուսի խոհարարական և սպասարկման թիմերի կողմից կազմակերպված հիանալի ճաշկերույթը:

ELE_VET ծրագրի եվրոպական գործընկերների հայաստանյան այցը

Էրազմուս+ ELE_VET ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ում տեղի ունեցան ակտիվ ֆոկուս-խմբային քննարկումներ ծրագրի գործընկեր հանդիսացող իտալական EGInA, պորտուգալական Insignare և հայաստանյան Երիտասարդների հնարավորությունների ակումբ (YOC) կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումների ընթացքում մասնակիցներն անդրադարձան ծրագրի հիմնական ուղղություններին՝ դասավանդողների թվային հմտությունների կատարելագործում, դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառում, ձեռնարկատիրական հմտությունների ձեվավորում: Քննարկումներին ներկա էին նաև Քասախի Ռ. Գևորգյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի և Երևանի հ.1 արհեստագործական պետական ուսումնարանի ներկայացուցիչները, որպես ծրագրի հնարավոր գործընկեր:



Հավելենք, որ եվրոպական գործընկերները նախնական այց են կատարել վերոնշյալ հաստատություններ:

Մեր հյուրն էր Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը

ՍԵՊՖԱ-ն՝ Լիոնի մետրոպոլի ներկայացուցիչ Ֆլավի Դյումինյարի հետ հյուրընկալեց Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանին և աշխատակազմի ներկայացուցիչներին: Այցի ընթացքում հյուրերը ծանոթացան ՍԵՊՖԱ-ի զարգացման ծրագրերին՝ ուղղված կրթության որակի բարձրացմանը, երիտասարդների կարողությունների հզորացմանը, ինչպես նաև վարչական շրջանի զարգացմանը:



Ընդլայնում ենք համագործակցության աշխարհագրությունը

ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց Գերմանիայի Լայպցիգ քաղաքից ժամանած պատվիրակությանը, որի կազմում էին Լայպցիգի քաղաքապետարանի միջազգային հարաբերությունների բաժնի տնօրեն Գաբրիել Գոլֆուսը, Արևելյան Եվրոպայի հետ համագործակցության ծրագրի ղեկավար Քրիստինա Ռասմանը, ինչպես



նաև Սաքսոնիայում ՀՀ պատվավոր հյուպատոսարանի աշխատակից Սիրարփի Մովսիսյանն այցելել էին ՍԵՊՖԱ: Պատվիրակությանն ուղեկցում էր Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանը: Վերջիններս տնօրեն Գոհար Գրիգորյանի հետ շրջայց կատարեցին ՍԵՊՖԱ-ում, ծանոթացան կենտրոնի գործունեությանը, ծրագրերին և մասնագիտություններին:
Քննարկվեցին կրթության, մշակույթի, էկոտուրիզմի, առողջապահության, մասնավորապես «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության, և այլ ոլորտներում հնարավոր համագործակցությունների ուղիները՝ նպատակ ունենալով ամրապնդել հայ-գերմանական հարաբերությունները երիտասարդության զարգացման և միջմշակութային կապերի խորացման ոլորտներում:

Քայլարշավային 4-րդ փառատոնը Լոռիում էր

Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած քայլարշավային 4-րդ եռօրյա փառատոնին մասնակցում էին, ի թիվս այլ պետական մարմինների ներկայացուցիչների, նաև ՍԵՊՖԱ-ի ուսանողական, դասախոսական և ղեկավար կազմի ներկայացուցիչները: Փառատոնի պաշտոնական բացման արարողությանը հաջորդեցին քայլարշավներ դեպի Լոռվա բարձունքներ, տեղի ունեցան աշխատարաններ «Առաջին օգնության հմտություններ», «Արահետների կառուցում ու գծանշում», «Տեղանքում կողմնորոշում և քայլարշավային սարքավորումներ» թեմաներով:



Քայլարշավային 3 հագեցած օրերի ընթացքում մասնակիցները համախմբվեցին խարույկի շուրջ, ինչն էլ ուղեկցվեց հայկական երգ ու պարով:

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 28
25.07.2025

Մեր ուսանողները՝ ԱԺ-ում

ՍԵՊՖԱ-ի մի խումբ ուսանողներ «Հասարակագիտություն» և «Իրավունքի հիմունքներ» առարկաների դասախոս Անուշ Հովսեփյանի և Կարիերայի կենտրոնի պատասխանատու Անուշ Ստեփանյանի հետ այցելեցին ՀՀ Ազգային ժողով, հնարավորություն ունեցան ծանոթանալու շենքի պատմությանը, լինելու գրադարանում, թանգարանում, ինչպես նաև բացառիկ հարցազրույց ունենալու պատգամավորի հետ ճիշտ քաղաքացու կերտման թեմատիկայի շուրջ:



Հանդիպում շրջանավարտի հետ

ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության շրջանավարտ Լուսինե Օսյանին, որը երկար տարիներ աշխատում է Կոշտոյան բրենդում: Լուսինեն ուսանողներին պատմեց իր մասնագիտական ուղու, ձեռքբերումների և կարիերայի աճի մասին:
Պրակտիկ հմտություններ փոխանցելու նպատակով նա անցկացրեց կորսետի ձևման և վերջնամշակման վարպետաց դաս:

Վարպետաց դասը հագեցած էր նոր գիտելիքներով



Lanesa հարսանյաց հագուստի սրահի տնօրեն, ՍԵՊՖԱ-ի գործընկեր գործատու Արմինե Սահակյանը «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների հետ անցկացրեց հետաքրքիր վարպետաց դաս՝ նվիրված երեկոյան կիսաշրջազգեստի նախագծմանն ու դրա առանձնահատկություններին:
Վարպետաց դասը ոչ միայն հագեցած էր նոր գիտելիքներով, այլ նաև նպաստեց ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ու մոտիվացիային:

Արման Մկրտումյանը 3-րդն էր հրաձգության բաց հուշամրցաշարում

Ղրցախի հերոս Արմենակ Ուրֆանյանի հիշատակին նվիրված հրաձգության բաց հուշամրցաշարում ՍԵՊՖԱ-ի ուսանող Արման Մկրտումյանը անհատական պայքարում զբաղեցրեց պատվավոր 3-րդ տեղը: Մրցաշարը հնարավորություն է տվել նոր գիտելիքներ ձեռք բերել զենքի և դրա հետ վարվելու կանոնների վերաբերյալ:

Պետանքը համախմբել էր

ՍԵՊՖԱ-ն հյուրընկալել է KASA հիմնադրամի ֆրանսիացի կամավորներին և Իրանից, Հաիթիից ու Սիրիայից ժամանած փախստականներին: Ուխ նախագահն ու փոխնախագահը ոչ միայն հաճույքով նրանց հետ պետանք խաղացին, այլև սովորեցրին խաղի կանոնները: Օրվա ընթացքում կազմակերպվեց նաև շրջայց, որի ժամանակ հյուրերը ծանոթացան կենտրոնի գործունեությանը:



Յուրահատուկ ցուցադրություն

Կարի արտադրության տեխնոլոգիա մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողները մասնագիտական նկարչություն առարկայի շրջանակում ունեցան փոքրիկ ցուցադրություն «Արվեստը և նորաձևությունը» խորագրով:
Ուսանողները ցուցադրեցին էսքիզներ, որոնք կյանքի են կոչվել ՍԵՊՖԱ-ի կարի արհեստանոցում արտադրական ուսուցման վարպետների հսկողությամբ:

